ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 31-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Մարզպետն ընդունել է 107 քաղաքացու: Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր վաթսուներկու, աշխատանքի տեղավորման՝ քառասուներկու, տանիքի վերանորոգման՝ երկու, սեփական տան ջրագծի կարգավորման հարցերով՝ մեկ քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից հիսուներեքին տրվել է դրական լուծում, վեց դիմում մերժվել է, դիմումներից երեքի վերաբերյալ մարզպետը հանձնարարել է համապատասխան ստորաբաժանմանը ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություն:

Հաշվառման են վերցվել աշխատանքի ընդունվելու մասին երեսունութ դիմումները, իսկ չորսը պաշտոնական գրությամբ ներկայացվել են <<Զանգեզուրի ՊՄԿ>> ՓԲ ընկերության ղեկավարությանը՝ աշխատանքի ընդունելու առաջարկությամբ:

Վահե Հակոբյանի հանձնարարությամբ աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներում ուսումնասիրվում են տանիքի վերանորոգման, սեփական տան ջրագծի կարգավորման վերաբերյալ դիմումները:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ